

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ  
2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

2018


## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### ԱՀ ֆինանսների նախարարության կողմից 2017 թվականին կատարված աշխատանքների մասին

2017 թվականին ԱՀ-ում իրականացվող պետական ֆինանսատնտեսական քաղաքականությունը հիմնականում ուղղված էր մակրոտնտեսական կայունության, տնտեսական աճի բարձր տեմպերի, պետության ֆինանսական միջոցների հավաքագրման, բաշխման և վերաբաշխման գործընթացների արդյունավետության ապահովմանը:

Ըստ նախնական տվյալների 2017 թվականի համախառն ներքին արդյունքը (այսուհետ՝ ՀՆԱ) կազմել է 267.0 մլրդ դրամ՝ ապահովելով իրական աճի տեմպ 15.1 տոկոսի չափով: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 1,819.3 հազ. դրամ՝ 2016 թվականի 1,577.3 հազ. դրամի դիմաց:

*Տնտեսության ճյուղերի՝ ՀՆԱ-ի իրական աճին նպաստման չափերը, տոկոսային կեստ*



2017 թվականի պետական բյուջեի եկամուտները կազմել են 41,383.6 մլն դրամ, ընդ որում՝ հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են 39,773.8 մլն դրամ՝ ապահովելով պլանային առաջադրանքի կատարումը 106.0 տոկոսով:

2017 թվականի պետական բյուջեն կատարվել է՝ առանց ծախսերի գծով ընթացիկ պարտքերի կուտակման: Պետական բյուջեով նախատեսված ծրագրերը հիմնականում իրականացվել են նախանշված ծավալներով՝ ապահովելով ակնկալվող արդյունքները: Հաշվետու տարվա պետական բյուջեի ծախսերը կազմել են 91,983.3 մլն դրամ:

Հանրապետության տնտեսությունը բնութագրող մյուս ցուցանիշները կազմել են՝

| Ցուցանիշը                                     | 2013թ.    | 2014թ.    | 2015թ.    | 2016թ.    | 2017թ.<br>(նախնական<br>տվյալներով) |
|---|-----------|-----------|-----------|-----------|------------------------------------|
| Անվանական ՀՆԱ (մլն դրամ)                      | 168,563.6 | 188,840.3 | 209,345.7 | 229,651.6 | 267,000.0                          |
| ՀՆԱ-ի իրական աճ (%)                           | 9.3       | 8.9       | 9.1       | 9.2       | 15.1                               |
| ՀՆԱ 1 շնչի հաշվով (հազ. դրամ)                 | 1,137.9   | 1,268.1   | 1,414.3   | 1,577.3   | 1,819.3                            |
| Արդյունաբերության իրական աճ (%)               | 110.0     | 117.2     | 102.5     | 109.7     | 154.7                              |
| Գյուղատնտեսության իրական աճ (%)               | 109.2     | 95.7      | 112.9     | 107.4     | 110.0                              |
| Շինարարության աճ (%)                          | 118.1     | 111.7     | 101.0     | 91.0      | 101.5                              |
| Պետական բյուջեի սեփական եկամուտներ (մլն դրամ) | 27,919.3  | 31,485.4  | 34,436.4  | 33,711.1  | 41,313.6                           |
| այդ թվում՝ հարկային եկամուտներ (մլն դրամ)     | 18,936.3  | 18,291.6  | 33,175.5  | 32,432.3  | 39,773.8                           |
| Պետական բյուջեի ծախսեր (մլն դրամ)             | 67,343.8  | 69,623.2  | 82,749.5  | 84,670.4  | 91,983.3                           |

**ԱՀ ֆինանսների նախարարությունը** (այսուհետ՝ Նախարարություն) մշակում և իրականացնում է պետության եկամուտների ձևավորման, պետական ֆինանսների կառավարման բնագավառներում գործադիր իշխանության քաղաքականությունը, ինչպես նաև պետական եկամուտների վճարման և պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողությունը:

Նախարարությունը հանդիսանում է նաև «Հարկային ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով նախատեսված հարկային մարմին:

2017 թվականի ընթացքում Նախարարության գործունեությունն ուղղված էր ԱՀ օրենքներով, կառավարության որոշումներով, այլ իրավական ակտերով և իր կանոնադրությամբ վերապահված գործառույթների ու լիազորությունների իրականացմանը, ինչպես նաև ԱՀ Նախագահի 2017-2020 թվականների ծրագրի և այլ աշխատանքային ծրագրերի կատարումն ապահովող միջոցառումների իրագործմանը: Նշված ուղղություններով կատարված աշխատանքները հիմնականում բնութագրվում են հետևյալ կերպ:

### **Բյուջետային քաղաքականություն**



Հաշվետու ժամանակաշրջանում բյուջետային քաղաքականությունը նպատակաուղղված էր բնակչության սոցիալական հարցերի լուծմանը, կենսամակարդակի բարձրացմանը, պետական միջոցների նպատակային ծրագրավորման գործընթացի ապահովմանը:

«ԼՂՀ 2017 թվականի պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքի և «ԼՂՀ 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ԼՂՀ կառավարության որոշման դրույթների համաձայն աշխատանքներ են իրականացվել պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների, բյուջետային հիմնարկների և կազմակերպությունների կողմից ներկայացված պահպանման ծախսերի նախահաշիվների, հաստիքացուցակների, տարիֆիկացիաների, ինչպես նաև առանձին ծառայություններից օգտվելու համար կնքված պայմանագրերի ստուգման ուղղությամբ:

Ընդունվել, ստուգվել և ընդհանրացվել են համայնքների ավագանիների կողմից հաստատված 2017 թվականի համայնքային բյուջեները՝ ըստ եռամսյակային համամասնությունների:

Մշակվել է ԼՂՀ 2018-2020 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ԱՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծերի ձևավորման բնագավառում պետական իշխանության մարմինների աշխատանքների կատարման ժամանակացույցը սահմանող ԼՂՀ վարչապետի որոշման նախագիծը, որը ընդունվել է 2017 թվականի մայիսի 29-ին:

ԼՂՀ վարչապետի 2017 թվականի մայիսի 29-ի «ԼՂՀ 2018 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» թիվ 147-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցի համաձայն կազմակերպվել են ԼՂՀ 2018-2020 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման և ԱՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծի կազմման աշխատանքները: Մշակվել են ԼՂՀ պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կողմից ներկայացվող 2018-2020 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ԱՀ 2018 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման մեթոդական ցուցումները:

Վերոնշյալ որոշման պահանջների համաձայն կազմվել են նաև 2018 թվականի համայնքների բյուջեների նախագծերի մշակման և ԱՀ պետական բյուջեից հատկացումներ ստանալու նպատակով բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման ու ներկայացման պարտադիր բնույթի մեթոդական ցուցումները և խորհրդատվական բնույթ կրող ուղեցույցները, պետական տուրքերի և այլ եկամուտների գծով ԱՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծով ծրագրման ենթակա բյուջետային մուտքերի գումարների կանխատեսումների կազմման համար անհրաժեշտ մեթոդական ցուցումները:

Ուսումնասիրվել և ընդհանրացվել են.

- պետական և տարածքային կառավարման մարմինների կողմից ներկայացված 2018-2020 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և 2018 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը,

- համայնքների կողմից ներկայացված ԱՀ պետական բյուջեից դոտացիա ստանալու 2018 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը: Հաշվարկվել են համայնքների բյուջեներին պետական բյուջեից հատկացվող դոտացիաների գումարները,

- ԼՂՀ պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կողմից ներկայացված պետական տուրքերի և այլ եկամուտների գծով ԼՂՀ 2018-2020 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով և ԱՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծով ծրագրման ենթակա բյուջետային մուտքերի գումարների մասին տեղեկությունները:

Մշակվել են ԼՂՀ 2018-2020 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը, որը ԼՂՀ կառավարության կողմից ընդունվել է 2017 թվականի սեպտեմբերի 20-ին: Պետական բյուջեների ձևավորումը միջնաժամկետ հատվածում նախատեսվել է բյուջետային ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցմամբ: Ստորև ներկայացվում են ԼՂՀ 2018-2020թթ. ՄԺԾԾ-ի ծրագրի հիմնական ցուցանիշները.

| Ցուցանիշներ                                      | 2017<br>թվականի<br>պետական<br>բյուջե | 2018թ.     | 2019թ.     | 2020թ.     |
|--|--------------------------------------|------------|------------|------------|
|  |                                      | ծրագիր     |            |            |
| Անվանական ՀՆԱ (մլն դրամ)                         | 254,200.0                            | 280,100.0  | 308,600.0  | 340,000.0  |
| Տնտեսական աճ, %                                  | 8.0                                  | 8.0        | 8.0        | 8.0        |
| Պետական բյուջեի եկամուտները, ընդամենը (մլն դրամ) | 88,737.5                             | 97,315.4   | 104,826.4  | 113,638.4  |
| Պետական բյուջեի ծախսերը, ընդամենը (մլն դրամ)     | 94,432.0                             | 94,770.9   | 94,950.0   | 95,274.9   |
| Պետական բյուջեի դեֆիցիտը (-), հավելուրդը (+)     | -5,694.5                             | 2,544.5    | 9,876.4    | 18,363.5   |
| <i>հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%<br/>ով)</i> | <i>-2,2</i>                          | <i>0,9</i> | <i>3,2</i> | <i>5,4</i> |

2017 թվականի տարեվերջի տնտեսության զարգացման միտումները թույլ են տվել 2017 թվականի համար ակնկալել ավելի բարձր տնտեսական աճի տեմպեր, քան ծրագրվել է 2018-2020 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով: Հիմք ընդունելով 11 ամսվա տվյալները տարեկան տնտեսական աճի ցուցանիշը գնահատվել է շուրջ 15.1 տոկոս՝ 1.0 տոկոս դեֆլյատորի պայմաններում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ վերանայվել են նաև 2018 թվականի մակրոտնտեսական և բյուջեի ցուցանիշները:

2018 թվականի համար համախառն ներքին արդյունքի ծավալը կանխատեսվել է 291.0 մլրդ դրամի չափով՝ ապահովելով իրական աճ՝ մոտ 8.0 տոկոսի չափով:

2018 թվականին պետական բյուջեի եկամուտները ծրագրվել են 96,428.2 մլն դրամի չափով, աճը 2017 թվականի համար ծրագրված եկամուտների նկատմամբ կազմել է 8.7 տոկոս (ավելացում՝ 7,690.7 մլն դրամ):

Պետական բյուջեի եկամուտներում սեփական եկամուտները ծրագրվել են 45.0 մլրդ դրամ, իսկ միջպետական վարկի չափը՝ 51.4 մլրդ դրամ:

Պետական բյուջեի ծախսերը նախատեսվել են 101,538.8 մլն դրամ՝ ապահովվելով աճ՝ 7.5 տոկոս (2017թ. 94,432.0 մլն դրամի դիմաց):

Մասնակցություն է ցուցաբերվել ԱՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում և պատգամավորական խմբակցություններում «ԱՀ 2018 թվականի պետական բյուջեի մասին» ԱՀ օրենքի նախագծի քննարկումներին:

«ԱՀ բյուջետային համակարգի մասին» ԼՂՀ օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների համաձայն մշակվել է ԱՀ 2018 թվականի պետական բյուջեի ծախսերի տարեկան հատկացումների կատարման եռամսյակային (աճողական)

համամասնությունները (ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի ու դրանք իրականացնող մարմինների) հաստատող «ԱՀ 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» որոշման նախագիծը, որը ԱՀ կառավարության կողմից ընդունվել է 2017 թվականի դեկտեմբերի 29-ին:

Հաշվետու ժամանակաշրջանում մշակվել է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի նախագիծը (ԼՂՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2017 թվականի ապրիլի 20-ին), որի համաձայն՝

- 450.0 մլն դրամով ավելացվել է ԼՂՀ 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված «Հարկային եկամուտներ և պետական տուրքեր» եկամտատեսակը՝ ի հաշիվ ռադիոհաճախականության օգտագործման վճարների չափերի ավելացման.

- 450.0 մլն դրամով ավելացվել է ԼՂՀ 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված կապիտալ ներդրումների ծրագիրը:

«ԱՀ բյուջետային համակարգի մասին» ԼՂՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի ու «ԼՂՀ 2017 թվականի պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն պատրաստվել են ԼՂՀ 2017 թվականի պետական բյուջեում վերաբաշխումներ և փոփոխություններ կատարելու մասին կառավարության թվով 14 որոշումների նախագծեր:

Հաշվետու տարվա ընթացքում կատարվել է ԼՂՀ 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված պահուստային ֆոնդից և այլ կենտրոնացված ֆոնդերից կառավարության որոշումներով իրականացվող հատկացումների, օրենսդրությամբ սահմանված կարգով բյուջետային միջոցների վերաբաշխումների հաշվառումը:

Մշակվել են պետական բյուջեի կազմման և կատարման հարցերին առնչվող ԼՂՀ օրենքների, ԼՂՀ կառավարության և վարչապետի որոշումների նախագծեր, ինչպես նաև նախարարություններից ու գերատեսչություններից ստացված համանման նախագծերի վերաբերյալ տրվել են համապատասխան առաջարկություններ:

Մշակվել և 2018 թվականի պետական բյուջեի նախագծի կազմում ԱՀ Ազգային ժողովի քննարկմանն են ներկայացվել.

- «ԱՀ բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԱՀ օրենքի և կից ներկայացվող մի շարք օրենքների նախագծեր, որոնց համաձայն վերանայվել է բյուջետային գործընթացի

շրջանակներում Արցախի Հանրապետության Նախագահին, կառավարությանը և վարչապետին վերապահված իրավասությունները,

- «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԱՀ օրենքի նախագիծը, որի համաձայն սահմանվել են նոր պաշտոնների պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները, ինչպես նաև օրենքից հանվել են նոր Սահմանադրությամբ և դրանից բխող օրենքներով ու ԱՀ Նախագահի հրամանագրերով վերացված պաշտոնների պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները:

Նշված նախագծերը ընդունվել են 2017 թվականի դեկտեմբերի 21-ին:

50 տոկոսից ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր ունեցող բաժնետիրական ընկերությունների տրամադրության տակ մնացած շահույթի բաշխման նպատակով ուսումնասիրվել են պետական լիազորված մարմիններից ստացված առաջարկությունները և տրվել են համապատասխան եզրակացություններ գուտ շահույթի օգտագործման ուղղությամբ: 2016 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքով ստացված գուտ շահույթից պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի դիմաց վճարման ենթակա շահութաբաժինների չափերի վերաբերյալ պատրաստվել է ԼՂՀ կառավարության որոշման նախագիծ, որը ԼՂՀ կառավարության կողմից ընդունվել է 2017 թվականի հունիսի 16-ին: Որոշման համաձայն ԼՂՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների ընդհանուր գումարը կազմել է 112.6 մլն դրամ:

Ապահովվել են արտաբյուջետային մուտքերի համակարգման, հաշվառման և նախատեսված ծրագրերի իրականացմանը նպատակաուղղված ֆինանսավորման գործընթացները:

ԼՂՀ կառավարության մարդասիրական օգնության արտաբյուջետային հաշվին 2017 թվականին նպատակային ծրագրերի իրականացման համար ստացվել է 2,051.9 հազ. ԱՄՆ դոլար: Նույն ժամանակահատվածում քաղաքաշինության, կրթության, առողջապահության և այլ բնագավառներում նպատակային ծրագրերով ֆինանսավորվել է 4,384.1 հազ. ԱՄՆ դոլար:

2016 թվականի ապրիլյան պատերազմի կապակցությամբ 2017 թվականին հանգանականության կարգով ԼՂՀ կառավարության մարդասիրական օգնության



արտաբյուջետային հաշիվ է մուտքագրվել 684.2 մլն դրամ՝ թվով 82 ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից, որն ուղղվել է ԱՀ պաշտպանության նախարարության համար ռազմական նշանակության տեխնիկայի և սարքավորումների ձեռքբերմանը, ինժեներական աշխատանքների կատարմանը, ԱՀ սահմանային գոտիներում հողային աշխատանքներ իրականացված մեխանիզմների վերանորոգման դիմաց փոխհատուցումների տրամադրմանը, ԱՀ Մարտակերտի շրջանի Մատաղիս գյուղում բնակելի տների կապիտալ վերանորոգման աշխատանքների իրականացմանը ու այլ նպատակներին: Կազմվել և հրապարակվել են ամենօրյա հաշվետվություններ՝ ստացված հանգանակությունների վերաբերյալ:

Մարդասիրական օգնության արտաբյուջետային հաշվից կատարվող ֆինանսական հոսքերի մասին պատրաստվել են ամենամսյա հաշվետվություններ:

### **Գանձապետական համակարգ**



2017 թվականին գանձապետական համակարգի ոլորտում Նախարարության աշխատանքներն ուղղված են եղել ինչպես ԱՀ պետական բյուջեի համաչափ և սահուն կատարման ապահովմանը, այնպես էլ համակարգի զարգացման և կատարելագործման համար անհրաժեշտ գործառնությունների իրականացմանը:

2017 թվականի ԱՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորվել են 91,983.4 մլն դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսված ծրագրի 96.4 տոկոսը:

Ամբողջ ծավալով վճարվել են աշխատավարձի գծով նախատեսված միջոցները, կենսաթոշակները, նպաստները, ծնելիության և բազմազավակության խթանման միջոցառումների և այլ սոցիալական ծրագրերի իրականացման ծախսերը:

Տարվա ընթացքում գանձապետական համակարգը սպասարկել է 441 իրավաբանական անձանց (37 պետական կառավարման մարմին, 227 տեղական ինքնակառավարման մարմին, 164 պետական ոչ առևտրային կազմակերպություն, 11 փակ բաժնետիրական ընկերություն և 2 այլ հիմնարկ) 5722 գանձապետական հաշիվներով, որից 1852՝ պետական բյուջեի, 3689-ը՝ համայնքային բյուջեների, 181-ը՝ արտաբյուջետային գործառնությունների իրականացման համար:

Հաշվետու ժամանակահատվածում Նախարարության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

➤ ընդունվել են ԱՀ նախարարությունների, գերատեսչությունների, բյուջետային հիմնարկների, պետական ոչ առևտրային և հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացվող բյուջետային ծախսերի ֆինանսավորման հայտերը, ստուգվել, և ճշտության դեպքում իրականացվել է ֆինանսավորումը,

➤ պետական բյուջեի ծախսերի դրամարկղային կատարումն իրականացնելու նպատակով ապահովվել է առկա դրամարկղային միջոցների բաշխումը կենտրոնական գանձապետարանից տեղական գանձապետական բաժիններին և վերահսկվել կատարումը վերջիններիս կողմից,

➤ պետական և համայնքային բյուջեների կատարման ընթացքում նախնական հսկողություն է իրականացվել բյուջետային հիմնարկների կողմից կատարվող վճարումների ճշտության և նպատակայնության նկատմամբ,

➤ պատրաստվել են ամենօրյա և ամենամսյա տեղեկություններ պետական բյուջեի եկամուտների, բյուջետային հիմնարկների, պետական ոչ առևտրային և հասարակական կազմակերպությունների ֆինանսավորման մասին,

➤ կազմվել է ամենամսյա տեղեկատվություն ԱՀ պետական բյուջեի կատարողականի մասին (գործառական և տնտեսագիտական դասակարգմամբ) և սահմանված ժամկետում ներկայացվել է ԱՀ Ազգային վիճակագրական ծառայություն,

➤ հսկողություն է սահմանվել 50 տոկոսից ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր ունեցող բաժնետիրական ընկերությունների կողմից տնտեսական գործունեության արդյունքում մնացորդային շահույթից շահութաբաժինները պետական բյուջե փոխանցելու նկատմամբ: Շահութաբաժիններից մուտքագրված գումարը կազմել է 580.3 մլն դրամ` պլանավորված 540.0 մլն դրամի դիմաց,

➤ նախարարություններից, գերատեսչություններից, բյուջետային այլ հիմնարկներից, տեղական գանձապետական բաժիններից և հասարակական կազմակերպություններից ընդունվել են պետական բյուջեի կատարման 2016 թվականի տարեկան, 2017 թվականի առաջին եռամսյակի, առաջին կիսամյակի և 9 ամսվա հաշվետվությունները, որոնց հիման վրա կազմվել են ԱՀ պետական և համայնքային բյուջեների ամփոփ հաշվետվությունները, պատրաստվել են համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի «ԼՂՀ պետական բյուջեի կատարման մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագծերը և սահմանված ժամկետներում ներկայացվել ԼՂՀ կառավարություն,

➤ մասնակցություն է ապահովվել ԱՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում ԼՂՀ 2016 թվականի պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության քննարկումներին,

➤ յուրաքանչյուր հաշվետու ժամանակահատվածից հետո ԱՀ պետական բյուջեի կատարման վերլուծության ամփոփ բնութագիրը ներկայացվել է մամուլում հրապարակման համար,

➤ անհրաժեշտության դեպքում նախարարությունների և գերատեսչությունների գրությունների հիման վրա ճշտումներ են իրականացվել նախահաշիվների հոդվածներում: Տարվա ընթացքում մուտքագրվել է 268 գրություն՝ ծախսերի հոդվածային փոփոխություն կատարելու խնդրանքով, որոնցից բավարարվել է 245-ը: 2016 թվականի համեմատ գրությունների քանակը ավելացվել է 52 -ով,

➤ ԱՀ պետական կառավարման մարմինների 61 գրության հիման վրա նրանց կողմից օրենսդրությամբ սահմանված հիմքերով հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելու համար պետական բյուջեից իրականացվել են «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքով նախատեսված վճարումները: Նախորդ տարվա համեմատ պետական կառավարման մարմինների կողմից օրենսդրությամբ սահմանված հիմքերով հայցադիմումները ավելացվել են 33-ով ,

➤ կատարվել է քաղաքացիների ընդունելություն՝ հիմնականում նրանց կողմից պետական և համայնքային բյուջեներ իրավաբանական անձանց կողմից մատուցված ծառայությունների դիմաց սխալմամբ կամ ավել վճարված, ինչպես նաև ծառայությունների կատարումը մերժելու դեպքում վճարված պետական տուրքի գումարի վերադարձման հարցերով, ընդունվել է 101 դիմում:

### **Հարկային քաղաքականության**



2017 թվականին հարկային եկամուտների և պետական տուրքի մասով բյուջե է մուտքագրվել 39,773.9 մլն դրամ, որը պլանավորված 37,530.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցել է 6.0 տոկոսով կամ 2,243.9 մլն դրամով:


Նախորդ տարվա համեմատ հարկային եկամուտների և պետական տուրքի գծով մուտքերն աճել են 22.6 տոկոսով կամ 7,341.6 մլն դրամով:

Հարկային եկամուտների և պետական տուրքի գծով մուտքերը պլանային առաջադրանքների և նախորդ տարվա համեմատ ներկայացնում են հետևյալ պատկերը.

(մլն դրամ)

| Եկամտատեսակը   | Պլանային առաջադրանքը | 2017թ. մուտքագրված գումարները | Հարաբերություն մուտք/պլան (%) | Հարաբերություն 2017/2016 (%) |
|--|----------------------|-------------------------------|-------------------------------|------------------------------|
| Ա Ա Հ  | 14,349.5             | 15,490.9                      | 108.0                         | 139.3                        |
| Շահութահարկ  | 2,713.7              | 3,077.4                       | 113.4                         | 149.8                        |
| Եկամտային հարկ   | 14,968.7             | 14,985.0                      | 100.1                         | 99.7                         |
| Ակցիզային հարկ   | 114.0                | 157.3                         | 138.0                         | 105.6                        |
| Հաստատագրված վճար  | 390.1                | 397.0                         | 101.8                         | 79.5                         |
| Առևտրի հարկ  | 1,514.0              | 1,629.1                       | 107.6                         | 112.0                        |
| Բնապահպանական և բնօգտագործման վճարներ  | 1,535.1              | 1,822.4                       | 118.7                         | 266.4                        |
| <i>այդ թվում՝ ռոյալթի</i>  | 818.0                | 835.0                         | 102.1                         | 528.6                        |
| Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող մասհանումներ | 498.0                | 561.8                         | 112.8                         | 133.1                        |
| Այլ հարկային եկամուտներ  | 42.5                 | 70.0                          | 164.8                         | 117.8                        |
| Ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման և օգտագործման պարտադիր վճարներ   | 650.1                | 677.6                         | 104.2                         | 339.0                        |
| Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար  | 167.4                | 168.9                         | 100.9                         | 95.3                         |
| Արտոնագրային վճար  | 42.0                 | 58.0                          | 138.2                         | 154.0                        |
| Պետական տուրք  | 545.0                | 678.4                         | 124.5                         | 123.8                        |
| <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>  | <b>37530,1</b>       | <b>39773,8</b>                | <b>106,0</b>                  | <b>122,6</b>                 |

**2017 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտների կառուցվածքը, %**



## Հսկողական գործընթացներ

2017 թվականին հարկային մարմնի կողմից իրականացվել են պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 281 ստուգում: Նշված ստուգումներով հաշվարկված պարտավորությունները կազմել են 498.1 մլն դրամ: Հաշվետու տարում կատարված ստուգումներով բյուջե մուտքագրված գումարները կազմել են 256.2 մլն դրամ, իսկ ընթացիկ և նախորդ տարիներին կատարված բոլոր ստուգումների մասով բյուջե է մուտքագրվել 474.1 մլն դրամ՝ նախորդ տարվա 505.7 մլն դրամի դիմաց:

Զգալի աշխատանքներ են իրականացվել նաև հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ճշտության, ապօրինի գործունեության ծավալման, ձեռնարկատիրական գործունեության առարկաների գրանցման ճշտության, պատրաստի արտադրանքի, ապրանքների մնացորդի պակասորդի հայտնաբերման և չձևակերպված վարձու աշխատողների բացահայտման ուղղությամբ: Մասնավորապես, «Հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների դեմ պայքարի» հայեցակարգի շրջանակներում նախ իրականացվեցին իրազեկման հանդիպումներ Ստեփանակերտ քաղաքում և շրջաններում գործող հարկ վճարողների հետ, որից հետո նախաձեռնվեցին հսկողական միջոցառումներ, որոնց արդյունքում տարվա ընթացքում արձանագրվել են հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնների խախտման 88, ապօրինի ձեռնարկատիրական գործունեության իրականացման 11, վարձու աշխատողների չձևակերպման 63, առաքվող ապրանքների ու դրանց գների գրանցման անհամապատասխանության 13, պատրաստի արտադրանքի և ապրանքների մնացորդի պակասորդի հայտնաբերման 20 դեպքեր:

Կամերալ հսկողության շրջանակներում իրականացվել են հարկ վճարողների 10,081 հաշվարկ-հաշվետվությունների ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 1,706 խախտումների մասով հարկ վճարողներին առաջարկվել է կատարել ճշտումներ՝ զերծ մնալով հետագա ստուգումներով առաջադրվելիք լրացուցիչ պարտավորություններից:

Հաշվետու տարում Արցախի Հանրապետության տարածք ապրանքանյութական արժեքների ներմուծման ծավալները կազմել են 111,658.6 մլն դրամ՝ նախորդ տարվա 96,278.8 մլն դրամի դիմաց: Նույն ժամանակահատվածում արտահանման ծավալները կազմել են 75,645.8 մլն դրամ՝ նախորդ տարվա 37,945.8 մլն դրամի դիմաց:

Աշխատանքներ են տարվել նաև հարկային հանցագործությունների կանխման, հակաիրավական գործունեություն իրականացնող անձանց պատասխանատվության ենթարկման և պետությանը պատճառված վնասների վերականգնման ուղղությամբ:

Հաշվետու տարում հարուցվել է 2 քրեական գործ՝ կանխամտածված սնանկության փաստի առթիվ, որով պետությանը հասցված վնասը կազմել է շուրջ 13.8 մլն դրամ:

Նախաքննության ընթացքում գտնվող 1 քրեական գործով վերականգնվել է պետությանը հասցված՝ 250.0 հազար դրամի չափով վնասը:

2017 թվականի ընթացքում կայացվել է վարչական տույժ նշանակելու մասին թվով 1439 որոշում՝ 20.9 մլն դրամ ընդհանուր գումարով, որից գանձվել է 18.3 մլն դրամը կամ առաջադրվածի 88 տոկոսը:

Զգալի աշխատանքներ են տարվել նաև հարկ վճարողների կուտակած պարտավորությունների նվազեցման ուղղությամբ: Այս առումով կարևոր նշանակություն է ունեցել «Հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» ԼՂՀ օրենքը: Թվով 2453 հարկ վճարողների հետ կնքվել են պարտավորությունների մարման 8-ամսյա, 12-ամսյա և 18-ամսյա տևողությամբ ժամանակացույցեր, որի համաձայն 2017 թվականի ընթացքում վերջիններիս կողմից մարվել են 5,677.6 մլն դրամի պարտավորություններ, այդ թվում՝ կնքված ժամանակացույցերի գումարներից՝ 1,210.3 մլն դրամ:

Պարտավորություններ կուտակած հարկ վճարողներին պարբերաբար ներկայացվել են նաև ծանուցումներ, իրականացվել վճարունակության ուսումնասիրություններ, կիրառվել արգելադրումներ, ներկայացվել դատական հայցեր: Մասնավորապես, ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան է ներկայացվել թվով 227 հայց՝ 619.5 մլն դրամ հայցապահանջի գումարով: Ներկայացված հայցերի մասով (այդ թվում՝ նախորդ տարիների մասով) դատական մարմինների կողմից հաշվետու տարում կայացվել է 200 վճիռ՝ 294.8 մլն դրամ ընդհանուր գումարով, ընդ որում՝ 294.8 մլն դրամը կամ 100 տոկոսը բավարարվել է, իսկ 330.5 մլն դրամ գումարով հայցապահանջները դեռևս գտնվում են դատական վարույթում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ԼՂՀ օրենսգրքով սահմանված կարգով նշանակված և չմարված վարչական տուգանքների բռնագանձման համար դատարան է ներկայացվել թվով 139 հայցադիմում՝ շուրջ 2.0 մլն դրամի չափով վճարման կարգադրություն արձակելու մասին, որոնք ամբողջությամբ բավարարվել են դատարանի կողմից:

Նախապատրաստվել և Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան են ներկայացվել նաև պարտապանին սնանկ ճանաչելու վերաբերյալ թվով 6, ինչպես նաև պարտապանին համատեղ սեփականության իրավունքով

պատկանող գույքից բաժինը որոշելու, առանձնացնելու, իսկ բնեղենով առանձնացումն անհնարին լինելու դեպքում՝ հրապարակային սակարկություններով վաճառելու պահանջների վերաբերյալ թվով 3 հայցադիմում:

### **Օրենսդրական և ենթաօրենսդրական դրույթների կատարելագործում**

2017 թվականի ընթացքում հարկային մարմնի կողմից նախաձեռնվել են 21 օրենքների, կառավարության 5 որոշումների նախագծեր, ընդունվել 11 գերատեսչական նորմատիվ ակտեր և 18 անհատական բնույթի հրամաններ:

Օրենսդրական փոփոխությունների փաթեթը, որը կիրառության մեջ է դրվել 2018 թվականի հունվարի 1-ից, միտված է տնտեսության որոշ ոլորտներում գործող արտոնությունների կիրառման ժամկետների երկարաձգմանը, հարկման մեխանիզմների կատարելագործմանը, որոշ պատասխանատվության միջոցների վերանայմանը և օրենքների կիրառության ընթացքում առաջ եկած խնդիրների լուծմանը: Մասնավորապես,

- երկարաձգվել են մի շարք ոլորտներում գործող հարկային արտոնությունների ժամկետները, այդ թվում՝ Հանրապետությունում արտադրվող գյուղատնտեսական արտադրանքի իրացման, ջրօգտագործող ընկերությունների կողմից ոռոգման ջրի մատակարարման գործարքների, գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների մշակության ընթացքում կատարվող աշխատանքների և բնակարանային շինարարության մասով սահմանված ավելացված արժեքի հարկից ազատման արտոնության ժամկետը երկրաձգվել է մինչև 2021 թվականի հունվարի 1-ը.

- վերանայվել են սահմանված որոշ պատասխանատվության միջոցներ, այդ թվում՝ նվազեցվել և միասնականացվել հարկերի կամ պարտադիր այլ վճարների վճարումն ուշացնելու դեպքում կիրառվող տույժերի դրույքաչափերը.

- միասնականացվել են հարկվող օբյեկտների նկատմամբ տարբեր հարկատեսակներով կիրառվող հարկման կանոնները, կանոնակարգվել հարկային օրենսդրությունում առկա տարընթերցումներն ու երկիմաստությունները:

### **Հանրային իրազեկման աշխատանքներ**

Օրենսդրական կատարելագործմանը զուգընթաց զգալի աշխատանքներ են տարվել հանրային իրազեկման աշխատանքների ընդլայնման, հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների որակի բարելավման ուղղությամբ:

Այդ նպատակով հարկ վճարողների հետ պարբերաբար կազմակերպվել են իրազեկման հանդիպումներ, անցկացվել ուսուցողական սեմինարներ: Մասնավորապես, 2017 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունները հարկ վճարողներին ծանոթացնելու և այն ավելի ընկալելի դարձնելու նպատակով վերադաս հարկային մարմնի կողմից Հանրապետության բոլոր շրջաններում և Ստեփանակերտ քաղաքում կազմակերպվել են 7 սեմինար-խորհրդակցություններ:

Պարբերաբար հանրային իրազեկման աշխատանքներ են իրականացվել նաև հարկային մարմնի պաշտոնական կայքէջի միջոցով ([www.tax.nk.am](http://www.tax.nk.am)). տեղեկատվություն է տրամադրվել հարկային մարմնի կողմից իրականացված ստուգումների, հարկ վճարողների գործունեության կասեցումների, օպերատիվ հետախուզական բացահայտումների և համակարգում կազմակերպվող մրցույթների վերաբերյալ, տրվել իրազեկման, նախազգուշական, քարոզչական բնույթի հայտարարություններ, հրապարակվել ամսական վիճակագրական տեղեկություններ: Հավաքագրվել և հաճախ տրվող հարցերի շտեմարանում ամենամյա պարբերականությամբ հրապարակվել են հարկ վճարողների կողմից առավել հաճախակի հնչեցրած հարցադրումներն ու դրանց պատասխանները: Հարկ վճարողների կողմից հաճախակի թույլ տրվող սխալներից խուսափելու նպատակով ամենամյա պարբերականությամբ հրապարակվել է նաև հաճախակի կրկնվող սխալների վերաբերյալ տեղեկատվությունը:

2017 թվականին հարկային մարմնի կայքէջի այցելուների քանակը կազմել է 157,510, իսկ միջին ամսական այցելուների քանակը՝ 13,126:

Պարզաբանման աշխատանքներ են իրականացվել նաև անհատական իրազեկման մակարդակով: Մասնավորապես, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների կողմից տեղերում կազմակերպվել է 2841 ընդունելություն, որոնց ընթացքում տրվել են պարզաբանումներ և ցուցումներ հարկ վճարողների կողմից բարձրացված հարցերի շուրջ:

Պարզաբանումներ են տրվել 46 հարկ վճարողների գրավոր հարցադրումներին, այդ թվում՝ հարկային մարմնի կայքէջի առցանց ռեժիմով և «Skype» հեռաձայնային ծառայության միջոցով տրվել են 19 պարզաբանումներ:

Առաջին անգամ Հանրապետությունում ներդրվել է օրինապահ հարկ վճարողների համակարգը, որի նպատակն է խրախուսել բարեխիղճ ու կարգապահ հարկ վճարողներին, ինչը նաև հարկ վճարողների շրջանում կամրապնդի հարկերի ինքնուրույն հաշվարկման և վճարման մշակույթը: Հաստատված չափանիշներին համապատասխան կազմվել են օրինապահ հարկ վճարողների երեք ցանկեր՝ խոշոր, միջին և փոքր, որում ընդգրկվել են 57



հարկ վճարողներ: Նշված հարկ վճարողներին տարեվերջին հանձնվել են «օրինապահ հարկ վճարողի» հավաստագրեր:

Տարվա ընթացքում թվով 820 գործատուների հետ կնքվել են հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու վերաբերյալ պայմանագրեր և տրվել օգտվողի անուն ու գաղտնաբառ՝ վերջիններիս ներկայացնելով էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման առավելությունները:

Գործունեությունը նոր սկսող 641 հարկ վճարողների տրամադրվել են եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով հավաստագրեր:

### **Համակարգի արդիականացում**

2017 թվականին հարկային վարչարարական բարեփոխումների շրջանակներում առանցքային ուղղություն է շարունակվել համարվել տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը, ինչը հնարավորություն է տալիս հարկ վճարողներին մատուցել ժամանակակից տեխնոլոգիաների վրա հիմնված ծառայություններ՝ ապահովելով հարկային ծառայողների աշխատանքի արդյունավետությունը:

Մասնավորապես, «Հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» ԼՂՀ օրենքին համապատասխան ավտոմատացվել է ժամանակացույցերի կնքման և տվյալների ամփոփման գործընթացը, շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության հետ համատեղ ներդրվել է բնապահպանական և բնօգտագործման վճարների եռամսյակային հաշվարկ-հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային տարբերակը, իսկ 2018 թվականի հունվարի 1-ից հնարավորություն է ստեղծվել կիսամյակային հաշվետվությունները ևս ներկայացնել էլեկտրոնային տարբերակով:

«Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ԱՀ օրենքին համապատասխան ավտոմատացվել է դրոշմանիշային վճարների հաշվառման գործառույթը և տեղեկատվության փոխանցումը հատուցման հիմնադրամին:

Թեստավորման ընթացքում է գտնվում հարկ վճարողների հարկային պարտավորությունների հաշվառման ենթահամակարգը:

2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ բոլոր հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման ենթահամակարգից օգտվողների թիվը կազմում է 2174 հարկ վճարող, որը կազմում է հաշվետվություն ներկայացնող հարկ վճարողների 49.1 տոկոսը:

Ընդ որում, 711-ը՝ 36.0 մլն դրամը գերազանցող իրացման շրջանառություն ունեցող հարկ վճարողներն են, որոնց համար հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով հանձնումը պարտադիր պահանջ է, իսկ 1463 հարկ վճարողներ կամ 36.0 մլն դրամը չգերազանցող իրացման շրջանառություն ունեցող հարկ վճարողների 39.3 տոկոսը կամավոր հիմունքներով են միացել էլեկտրոնային համակարգին:

### **Ֆինանսական վերահսկողություն**



Ֆինանսական վերահսկողության շրջանակներում հաշվետու տարվա ընթացքում լրիվ կամ մասնակի ստուգումներ են իրականացվել հանրապետության տարածքում գործող 142 իրավաբանական անձանց՝ տնտեսվարող սուբյեկտների և բյուջետային հիմնարկների մոտ, այդ թվում՝ 16 բյուջետային

հիմնարկներում, 79 պետական ոչ առևտրային կազմակերպություններում, 13 հիսուն տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում, 29 հասարակական կազմակերպություններում, 3 քաղաքային և 2 գյուղական համայնքներում:

Ստուգումների արդյունքներով հայտնաբերվել և լրացուցիչ հաշվարկվել է 299,659.8 հազ. դրամի անօրեն ծախսումներ, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդներ և ավելցուկներ, այդ թվում՝

- անօրինական դուրս գրումներ, վճարումներ և ծախսեր՝ 32,416.0 հազ. դրամ, որից ենթակա է վերականգնման պետական բյուջե՝ 5,155.8 հազ. դրամ, համայնքային բյուջե՝ 82.0 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին՝ 72.2 հազ. դրամ, հաշվառումով վերաձևակերպման՝ 27,106.0 հազ. դրամ,

- փաստաթղթերով չհիմնավորված ծախսեր՝ 5,641.2 հազ. դրամ, որից ենթակա է վերականգնման պետական բյուջե՝ 785.1 հազ. դրամ, համայնքային բյուջե՝ 146.4 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին՝ 26.0 հազ. դրամ, հաշվառումով վերաձևակերպման՝ 4,683.7 հազ. դրամ,

- նախահաշիվներով ավելի նախատեսված գումարներ՝ 12.6 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման պետական բյուջե,

- ոչ նպատակային, անարդյունավետ ծախսեր՝ 301.4 հազ. դրամ, որը ենթակա է հաշվառումով վերաձևակերպման,

- աշխատանքների և ծառայությունների հավելագրումներ՝ 3,164.9 հազ. դրամ, որից ենթակա է վերականգնման պետական բյուջե՝ 2,831.6 հազ. դրամ, համայնքային բյուջե՝ 25.2 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին՝ 308.1 հազ. դրամ,

- նորմերի խախտումներ՝ 2,701.2 հազ. դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 321.2 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին՝ 26.6 հազ. դրամ, ֆինանսավորումից պակասեցման՝ 198.5 հազ. դրամ, հաշվառումով վերաձևակերպման՝ 2,154.9 հազ. դրամ,

- գերաձախս՝ 131.4 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման պետական բյուջե,

- այլ խախտումներով արձանագրված գումարներ՝ 255,091.1 հազ. դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 222.9 հազ. դրամ, հաշվառումով վերաձևակերպման՝ 254,868.2 հազ. դրամ,

- ավելցուկ՝ 200.0 հազ. դրամ:

Նշված գումարներից պետական բյուջե լրացուցիչ հաշվարկված գումարները կազմել են 9,460.6 հազ. դրամ, համայնքային բյուջե հաշվարկված գումարները կազմել են՝ 253.6 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին վերականգնման ենթակա գումարները՝ 432.9 հազ. դրամ, ֆինանսավորումից պակասեցման ենթակա գումարները՝ 198.5 հազ. դրամ, հաշվառումով վերաձևակերպման ենթակա գումարները՝ 289,114.2 հազ. դրամ:

Ավելցուկը 1 պետական ոչ առևտրային կազմակերպությունում կազմել է 200.0 հազ. դրամ:

Լրացուցիչ հաշվարկված 299,659.8 հազ. դրամի և նախորդ տարվա ստուգման արդյունքներով հայտնաբերված անօրինական ծախսերից, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդներից ու ավելցուկներից վերականգնվել/վերաձևակերպվել է 41,993.8 հազ. դրամ, որից պետական բյուջե է վերականգնվել 14,334.5 հազ. դրամ, համայնքային բյուջե է վերականգնվել 3,707.6 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին է վերականգնվել 1,185.1 հազ. դրամ, ֆինանսավորումից պակասեցվել է 198.5 հազ. դրամ և հաշվառումով վերաձևակերպվել է 22,568.1 հազ. դրամ:

Ստուգման արդյունքներով երկու հիմնարկ-ձեռնարկության նյութերը ներկայացվել են ԱՀ ոստիկանություն:

## Հաշվապահական հաշվառման և աուդիտի կարգավորում

2017 թվականի հաշվետու տարում հաշվապահական հաշվառման և աուդիտի կարգավորման բնագավառում Նախարարության կողմից իրականացված աշխատանքները հիմնականում ուղղված էին հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման, մասնավոր հատվածի հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտների կարգավորմանը:

2017 թվականին շարունակվել են հանրային հատվածի կազմակերպությունների՝ հաշվապահական հաշվառման նոր համակարգին ներդրման աշխատանքները, որոնք ընդգրկել են հանրային հատվածի հաշվապահական հաշվառման օրենսդրաիրավական դաշտի ձևավորումը և կազմակերպությունների աստիճանաբար անցումը, որը պետք է իրականացվի 2017-2020 թվականների ընթացքում:

2018 թվականի հունվարի 1-ից ներդրվող նոր համակարգին անցնող հանրային հատվածի 77 կազմակերպությունների, այդ թվում՝ 14 պետական կառավարչական հիմնարկների և 63 պետական ոչ առևտրային կազմակերպությունների հաշվապահների համար կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ, որոնց ընթացքում մեկնաբանվել են հանրային հատվածի հաշվապահական հաշվառման՝

- ստանդարտի բաժինները,
- քաղաքականության օրինակելի մոդելը,
- ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանը և դաշտը կարգավորող այլ հարցեր:

2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ վերապատրաստված հաշվապահների թիվը կազմում է 91 հաշվապահ, որոնցից 25-ը համարվում է հանրային հատվածի հաշվապահի որակավորում ստացած:

Ամփոփվել են աուդիտ իրականացնող անձանց կողմից ԱՀ ֆինանսների նախարարություն ներկայացված եռամսյակային հաշվետվությունները, որոնց համաձայն 2017 թվականի ընթացքում աուդիտ իրականացնող անձանց կողմից իրականացվել է 8 պարտադիր և 2 կամավոր աուդիտ: Աուդիտ իրականացնող անձանց կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց մատուցվել են նաև օրենքով չարգելված այլ ծառայություններ:

Օրենքով սահմանված դեպքերում առևտրային կազմակերպությունների պարտադիր հրապարակման ենթակա ֆինանսական հաշվետվություններն ստորագրելու իրավունք տալու համար կազմակերպված հաշվապահների որակավորման 5 քննությունների մասնակցել է 7 դիմորդ: Քննությունների արդյունքներով տրամադրվել է որակավորված

հաշվապահի 6 վկայական:

2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ որակավորված հաշվապահների թիվը կազմել է 28 հաշվապահ, իսկ որակավորված աուդիտորներինը՝ 6 աուդիտոր:

Ստուգվել են ԱՀ պետական կառավարչական, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ներկայացված 2016 թվականի տարեկան և 2017 թվականի միջանկյալ հաշվետվությունները և տարվել են աշխատանքներ դրանց ճիշտ կազմման ուղղությամբ:

### **Գնումների գործընթացի կարգավորում**

2017 թվականի ընթացքում գնումների գործընթացի կարգավորման ոլորտում Նախարարության կողմից.

- ստուգվել, հաշվառվել և ծանուցում է տրվել մոտ 1110 գնման հաշվետվությունների,
- ուսումնասիրվել և հաշվառվել են պետության կարիքների համար 2017 թվականին իրականացվող գնումների պլանում փոփոխություն կատարելու վերաբերյալ պետական մարմինների կողմից ներկայացված թվով 302 առաջարկություններ, ինչպես նաև կնքված պայմանագրերում փոփոխություն կատարելու վերաբերյալ թվով 17 գրություններ,
- գնումների ընթացակարգերի կազմակերպման շրջանակներում պետական մարմինների կողմից ներկայացված հարցադրումների վերաբերյալ տրվել են առաջարկություններ և մեթոդական ցուցումներ,
- պատրաստվել են գնումների էլեկտրոնային պաշտոնական տեղեկագրում հրապարակման ենթակա նյութեր՝ բաց ընթացակարգով գնում կատարելու թվով 91 հայտարարություններ և հրավերներ, պարզեցված ընթացակարգով գնում կատարելու թվով 84 հայտարարություններ և հրավերներ, թվով 20 նախատրակավորման հայտարարություններ, շրջանակային համաձայնագրեր կնքված մասնակիցների վերաբերյալ թվով 21 տեղեկություններ,
- ստուգվել և ամփոփվել են 2016 թվականի տարեկան հաշվետվություններն ու պետական կառավարման մարմինների և ենթակա կազմակերպությունների կողմից ներկայացված 2017 թվականի գնումների պլանները,

Տարվա ընթացքում «Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից կնքվել է 11 շրջանակային համաձայնագիր: Ընդհանուր

առմամբ կնքված շրջանակային համաձայնագրերի թիվը տարեվերջի դրությամբ կազմել է 198, իսկ մեկ ընթացակարգի հաշվով՝ 12:

«Գնումների մասին» ԼՂՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման, գնման առարկայի բնութագրերի ստուգման և մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջներում խտրականության բացառման պայմանների պահպանման նպատակով «Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից ուսումնասիրվել է գնումների էլեկտրոնային տեղեկատույում հրապարակված 460 հրավեր և հայտարարություն:

Գնումների բողոքարկման խորհրդի կողմից 2017 թվականի ընթացքում ստացվել է մեկ բողոք, որի քննությունից հետո այն բավարարվել է:

Ընդհանուր առմամբ, 2017 թվականի ընթացքում պետական կառավարման մարմինների կողմից կատարված գնումների ծավալը (բացառությամբ գնումների բազային միավորը չգերազանցող, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ պայմանավորված և պետական գաղտնիք պարունակող գնումների) կազմել է 14,912.4 մլն դրամ, որից 6,812.0 մլն դրամը (45.7 տոկոսը) մրցակցային հիմունքներով կատարված գնումներն են: Մրցակցային հիմունքներով կատարված գնումների իրականացումն ապահովել է հատկացված միջոցների տնտեսում 116.2 մլն դրամի կամ հատկացված գումարի 1.7 տոկոսի չափով:

### **Ֆինանսական շուկայի զարգացում**

Նախարարության կողմից ամփոփվել են ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության (ԱՊՊԱ) համակարգի գործունեության 2017 թվականի արդյունքները: Հաշվետու տարում ԱՀ տարածքում ԱՊՊԱ ոլորտում գործունեություն են ծավալել Հայաստանի Հանրապետության 6 ապահովագրական ընկերություններ՝ իրավաբանական և ֆիզիկական անձ հանդիսացող 27 գործակալների միջոցով: 2017 թվականին ապահովագրվել է 10,442 ավտոմեքենա: Այդ ընթացքում 634 ճանապարհատրանսպորտային պատահարի կապակցությամբ իրականացվել է 88.9 մլն դրամի չափով գույքային և անձնական վնասների հատուցում:

Հիպոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման գործընթացի շրջանակներում 2017 թվականին կատարվել է վերադարձ 268 (2016 թվականի՝ 238) վարձու աշխատողի՝ 134.5 մլն դրամի

(2016 թվականի՝ 116.2 մլն դրամ) չափով:

Վերջին տարիների հիփոթեքային շուկայի պասիվ բնույթը և առևտրային բանկերի կողմից առաջարկվող հիփոթեքային վարկերի շուկայական տոկոսադրույքներն անհրաժեշտություն են առաջացրել մշակել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 26-ի «Բանկերի կողմից հիփոթեքային վարկավորմամբ բնակարաններ և բնակելի տներ ձեռք բերելու պետական աջակցության ապահովման կարգը հաստատելու մասին» N 101 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ որոշման նախագիծը, որի համաձայն վերանայվել է հիփոթեքային վարկերի առավելագույն տարեկան տոկոսադրույքը, հստակեցվել են սուբսիդավորման մոտեցումները, փոփոխության է ենթարկվել հիփոթեքային վարկի առավելագույն տևողությունը, ինչպես նաև շրջանների պարագայում նվազեցվել է հիփոթեքային վարկի ստացման համար կանխավճարի չափը:

ԼՂՀ կառավարության 2013 թվականի ապրիլի 25-ի «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների և 100 տոկոս պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների, կատարվող աշխատանքների, մատակարարվող ապրանքների առավելագույն գների (սակագների) հաստատման գործընթացի կանոնակարգման մասին» N 228-Ն որոշման համաձայն 2017 թվականին ընդունվել է մատուցվող ծառայությունների առավելագույն գների կիրառման վերաբերյալ Նախարարության համաձայնությանը ներկայացրած 2 հայտ: Կատարելով հայտերով ներկայացված հաշվարկ-հիմնավորումների ուսումնասիրություններ և վերլուծություններ՝ թվով 289 ծառայության առավելագույն գների կիրառման վերաբերյալ տրվել է համաձայնություն:

### **Լիցենզավորում**

«Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքի և ԼՂՀ կառավարության 2002 թվականի հունիսի 25-ի «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 128 որոշման համաձայն Նախարարության կողմից իրականացվում է «Աուդիտորական ծառայությունների իրականացում», «Վիճակախաղերի կազմակերպում», «Շահումով խաղերի կազմակերպում», «Խաղատների կազմակերպում» գործունեության տեսակների, ինչպես նաև պարզ ընթացակարգով լիցենզավորում:

Լիցենզավորման աշխատանքների շրջանակներում 2017 թվականի ընթացքում Նախարարության կողմից՝

➤ մշակվել և 2017 թվականի հոկտեմբերի 26-ին հաստատվել է ««Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին և «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը, որը պայմանավորված է խաղողի օդու արտադրությունը խթանելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև ուղղված է լիցենզավորման ոլորտի պետական կարգավորման արդյունավետության բարձրացմանը, գործող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը.

➤ տրամադրվել է ոգելից խմիչքների արտադրության 6 և վերաձևակերպվել է ոգելից խմիչքների արտադրության 12 լիցենզիա.

➤ միջոցներ են ձեռնարկվել պետական տուրքը ժամանակին գանձելու համար, հաշվետու տարվա ընթացքում հավաքագրվել է մոտ 10.2 մլն դրամ պետական տուրք.

➤ ամսական և եռամսյակային տեղեկություններ են տրամադրվել ԱՀ արդարադատության նախարարությանը, ԱՀ ազգային վիճակագրական ծառայությանը՝ տրամադրված, կասեցված, դադարեցված լիցենզիաների վերաբերյալ.

➤ «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքով նախատեսված լիցենզավորող մարմիններից եռամսյակային կտրվածքով հավաքագրվել են տեղեկություններ լիցենզիաների տրման, գործողության երկարաձգման, վերաձևակերպման, գործունեության իրականացման վայրի փոփոխության, գործողության դադարեցման վերաբերյալ, ստացված նյութերն ամփոփվել են և ընդգրկվել տվյալների բազա.

➤ վիճակախաղի կազմակերպման գործունեության բնագավառում հավաքագրվել են խաղարկությունով և ոչ խաղարկությունով վիճակախաղերի վերաբերյալ հաշվետվություններ, որոնց արդյունքներն ստուգվել և ամփոփվել են:

«ԱՐՅԱԽԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԽԱՂ» ՓԲԸ կողմից ներկայացված տեղեկություններով թողարկվել է 60,000 տոմս, որից վաճառվել է 30,226 տոմս, իսկ 29,774 տոմս մարվել է «Վիճակախաղերի մասին» ԼՂՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն ստեղծված Արցախի ազգային վիճակախաղի չիրացված տոմսերի հաշվառման, մարման ու պահպանման հանձնաժողովի կողմից: Ընդհանուր առմամբ, շահել է 131 տոմս, շահումային ֆոնդը կազմել է մոտ 30.2 մլն ՀՀ դրամ:

Հաշվետու տարվա վերջի դրությամբ ուժի մեջ է աուդիտորական ծառայությունների իրականացման 1, վիճակախաղերի կազմակերպման 1 և պարզ ընթացակարգով տրված 36 լիցենզիա:

Մշակվել է ««Վիճակախաղերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության



օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը, որի համաձայն ստեղծվել են իրավական հիմքեր տոմսերի, հաշվետվությունների և հրապարակումների էլեկտրոնայնացման համար, ինչպես նաև վերանայվել է հաստատագրված վճարի ամսական չափը՝ սահմանելով այն իրացված վիճակախաղերի տոմսերի ընդհանուր արժեքի 10 տոկոսի չափով, 20 տոկոսի փոխարեն:

### **Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքար**

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ԱՀ օրենսդրության համաձայն Նախարարության կողմից 2017 թվականի ընթացքում ստացվել, ուսումնասիրվել և տվյալների շտեմարան է մուտքագրվել թվով 145 հաշվետվություն, որոնք բոլորն էլ վերաբերում էին պարտադիր տեղեկացման ենթակա գործարքներին: Ներկայացված հաշվետվությունների բաշխումն ըստ հաշվետու անձանց տեսակների ներկայացված է ստորև.

- ԱՀ ռեզիստրի պետական տարածքային ստորաբաժանումներ՝ 64,
- Անշարժ գույքի կադաստրի վարչության տարածքային ստորաբաժանումներ՝ 9,
- Նոտարներ՝ 72:

### **Փաստաթղթաշրջանառություն, իրավաբանական ծառայություն և կադրային ոլորտ**

2017 թվականի ընթացքում ԱՀ ֆինանսների նախարարությունը ստացել է 7,391 փաստաթուղթ, որից 206-ը՝ քաղաքացիների դիմումներ: Բոլոր ստացված փաստաթղթերը քննարկվել և ընթացքավորվել են, անհրաժեշտության դեպքում տրվել են պատասխաններ:

Հաշվետու ժամանակաշրջանում Նախարարության կողմից ընդհանուր առմամբ մշակվել և ներկայացվել են 204 իրավական ակտերի նախագծեր, այդ թվում.

|                             |       |
|-----------------------------|-------|
| ԱՀ օրենքներ                 | - 37  |
| ԱՀ կառավարության որոշումներ | - 148 |
| ԱՀ վարչապետի որոշումներ     | - 5   |
| Նախարարի հրամաններ          | - 14  |

Ուսումնասիրվել են նախարարություններից ու գերատեսչություններից

ներկայացված ԱՀ օրենքների, ԱՀ կառավարության որոշումների, այլ իրավական ակտերի և ծրագրերի նախագծերը, գնահատվել են դրանց արդյունավետությունը և համապատասխանությունը ԱՀ օրենսդրության պահանջներին, տրվել են համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ:

Ուշադրության կենտրոնում մշտապես պահելով բնակչության հետ հետադարձ կապի ապահովումը՝ Նախարարության աշխատողների կողմից իրականացվել են ընդունելություններ ու հանդիպումներ (տարվա ընթացքում՝ ավելի քան հազար ընդունելություն):

Իրավաբանական անձանց ու քաղաքացիների կողմից Բարձրացված խնդիրները լսվել և պարզաբանվել են, ձեռնարկվել են միջոցներ դրանց լուծման ուղղությամբ:

Նախարարության կողմից կատարված աշխատանքների թափանցիկությունը և հրապարակայնությունն ապահովելու նպատակով մամուլում պարբերաբար հրապարակվել են հաղորդագրություններ:

Պարբերաբար իրականացվել են Նախարարության պաշտոնական ինտերնետային կայքէջերի ([minfin-nkr.am](http://minfin-nkr.am) և [tax.nk.am](http://tax.nk.am)) ընթացիկ տեղեկատվական թարմացման և համալրման աշխատանքները: Կայքէջերը պարունակում են տեղեկատվություն Նախարարության գործունեության հիմնական ոլորտների մասին, հայտարարություններ և վիճակագրական տվյալներ, նորություններ և պաշտոնական հաղորդագրություններ: Կայքէջերի միջոցով իրականացվում են նաև գնումների պաշտոնական էլեկտրոնային տեղեկագրի հրապարակման, ինչպես նաև մշակված իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումների կազմակերպման աշխատանքները:

**Կադրային ոլորտում** Նախարարության կողմից կատարված աշխատանքներն ուղղված են եղել քաղաքացիական ծառայության մասին և հարկային ծառայության մասին ԱՀ օրենսդրության պահանջների ապահովմանը, աշխատակազմի մասնագետների գիտելիքների և աշխատանքային հմտությունների բարձրացմանը:

Քաղաքացիական ծառայության մասին ԱՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվետու տարում կազմակերպվել է քաղաքացիական ծառայության գլխավոր և առաջատար պաշտոններ զբաղեցնելու համար 1 մրցույթ, անցկացվել է անձնակազմի 19 վերապատրաստում և 6 ատեստավորում:

Հաշվետու տարվա մայիս և նոյեմբեր ամիսների ընթացքում հարկ վճարողների սպասարկման և վերահսկողական գործառույթներ իրականացնող 158 աշխատակիցների հետ անց են կացվել ուսուցողական դասընթացներ՝ հաշվապահական հաշվառման,

սպասարկման, վերահսկողության, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման և մի շարք այլ թեմաներով: Հարկային մարմնի 2 աշխատակից, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված հրավերների շրջանակում, մասնակցել են IOTA և OECD միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպված ուսումնական դասընթացներին, ևս 16 աշխատակիցներ մասնակցել են ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին: Տարվա ընթացքում կազմակերպվել է նաև թվով 37 հարկային ծառայողների ատեստավորում, որի արդյունքներով 12 ծառայող համապատասխանել են զբաղեցրած պաշտոնին, իսկ 25-ը ենթակա են վերապատրաստման:

«Հարկային ծառայության մասին» ԼՂՀ օրենքին համապատասխան՝ տարվա ընթացքում կազմակերպվել է 2 բաց (այդ թվում՝ կրկնակի) և 1 փակ մրցույթ, որին մասնակցած 33 դիմորդներից 6-ը ընդունվել են աշխատանքի հարկային մարմնում:

Տարվա ընթացքում թվով 11 հարկային ծառայողներ ստացել են հատուկ և դասային կոչումներ:

Մերտ համագործակցություն է տարվել Հայաստանի Հանրապետության հարկային մարմնի հետ. ՀՀ և ԱՀ հարկային մարմինների միջև 2015-2017 թվականների համագործակցության միջոցառումների ծրագրի շրջանակում տարվա ընթացքում պարբերաբար կազմակերպվել են փոխադարձ այցելություններ, այդ թվում՝ մայիս ամսում Արցախ է այցելել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի պատվիրակությունը: Հանդիպման ընթացքում քննարկվել են համագործակցության ծրագրով նախատեսված մի շարք հարցեր: Մասնավորապես, փորձի փոխանակում է իրականացվել ՀՀ և ԱՀ հարկային մարմինների կողմից պետական բյուջեի հարկային եկամուտների ավելացման ուղղությունների և ռիսկերի բացահայտման գծով իրականացվող վերլուծական ու հսկողական աշխատանքների մասով: Երկու կառույցների միջև կատարվել են անուղղակի հարկերի հաշվանցումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի և այլ տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

Փորձի փոխանակման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության հետ համատեղ կազմակերպվել են մասնագետների փոխադարձ այցելություններ, նախարարության աշխատողները ծանոթացել և մասնակցել են տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսման և գնահատման FINPROG ֆինանսական ծրագրի ներդրման սեմինարին, մասնակցել Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից կազմակերպված օնլայն դասընթացներին: